ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱՅԺԱՐՈՅՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 99 - 100 (17106) ՇԱԲԱԹ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ Է՝ ԱՆԿԱԽ ՆՐԱՆՑ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ԽՄԲԻ»

Դեկտեմբերի 10-ին, Մարդու իրավուունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին սոցցանցում հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ կրկին ընդգծեց, որ երկրի կառավարության գլխավոր առաջնահերթությունը Վրաստանի քաղաքացիների համար հավասար, արժանապատիվ պայմանների ստեղծումն է, անկախ նրանց պատկանելությունից որեւէ խմբի:

«Մեր կառավարության գլխավոր առաջնահերթությունը Վրաստանի քաղաքացիների համար հավասար, ազատ եւ արժանապատիվ պայմանների ստեղծումն է՝ անկախ նրանց պատկանելության որեւէ խմբի, քանի որ կարծում ենք, որ, ժողովրդավարական պետություն կառուցելու ճանապարհին, անհրաժեշտ է պաշտպանել երկրի շահերը, բոլոր խմբերին եւ անհատներին եւ հոգ տանել նրանց իրավական կարգավիճակի մասին:

Այս ոգով 2014 թվականին կառավարությունը, նախ՝ հաստատեց 2014-2020 թվականների

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑՆԵՆ ՄԻԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դեկտեմբերին 12-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացված կառավարության նիստում, վարչապետը հայտարարեց, որ պարտադիր զինվորական ծառայությունը վերանայվել է, այն կբարեփոխվի, եւ բոլոր անձինք պարտադիր զինվորական ծառայություն կանցնեն միայն պաշտպանության նախարարության համակարգում:

- Մինչ այդ համակարգը մասնատված էր ու արդյունավետ չէր, դա պետք է խոստովանենք: Բոլոր վերլուծությունների համաձայն՝ այս ծառայությունը չի ապահովել այն արդյունավետությունը, որը մենք ցանկանում ենք ստանալ: Ուստի, մենք զրույց ունեցանք անվտանգության ծառայության կազմում ընդգրկված նախարարությունների հետ եւ պայմանավորվեցինք, որ պարտադիր զինվորական ծառայությունն ամբողջությամբ կփոխանցվի պաշտպանության նախարարության հա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԲՅՈՒՋԵ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՐԿԻՐԸ ԿՈՒՆԵՆԱ 29,9 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը երկրի խորհրդարանին է ներկայացրել 2023 թվականի պետական բյուջեի նախագիծը:

Քննարկումներից եւ բյուջեի նախագծի վերամշակումից հետո, վերջնական տարբերակով 2023 թվականին կառավարության ծախսերի գումարը 226 միլիոն լարիով, իսկ բյուջեն կազմեց 21,98 միլիարդ լարի:

Ըստ պետբյուջեի վերջնական նախագծի վերջնական տարբերակի, 2023 թվականին առողջապահության նախարարության բյուջեն, նախորդի համեմատ, ավելացվում է 60 միլիոն լարիով եւ կկազմի 6,858 միլիարդ լարի, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության բյուջեն ավելացվում է 355 միլիոն լարիով եւ կկազմի 3,331 միլիարդ լարի:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՐԴՅՈՒՆՔ Է ՏԱԼԻՍ»

Դեկտեմբերի 15-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին՝ խորհրդարանին ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության 2022 թվականի աշխատանքի արդյունքները:

Պետնախարարի հայտարարությամբ, անցնող տարին առանձնակի ծանրաբեռնված էր տարածաշրջանային եւ գլոբալ իրադարձություններով, ինչն էլ որոշակի ազդեցություն գործեց իրականացվող աշխատանքների վրա:

Մանրամասն ներկայացնելով բաժանարար գծի երկայնքով բնակավայրերում ստեղծված իրավիճակը, տեղի բնակիչներին ցուցաբերվող օգնությունը, պետնախարարը, անդրադառնալով ազգային փոքրամասնությունների ինտեգրման ռազմավարական տասնամյա ծրագրի առաջին երկու տարիների արդյունքներին, հայտարարեց, որ ծրագրի շրջանակնե-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՂՄ Է ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՌԱԿՈՂՄ ՁԵՎԱՉԱՓԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հանդես գալով Երեւանում «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումին, հայտարարեց, որ աջակցում է Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի եռակողմ ձեւաչափի կիրառմանը՝ Հարավային Կովկասում իրավիճակը քննարկելու եւ թշնամական հռետորաբանությունը վերացնելու համար:

- Գաղափար կա՝ ինչ-որ ձեւաչափով Հարավային Կովկասում քննարկումներ սկսել Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Ես ենթադրում եմ, որ այս գաղափարը պահպանվում է: Սա նոր գաղափար չէ: Ես միշտ պաշտպանել եմ այս գաղափարը, բայց դուրս եմ եկել ամենակարեւոր, հիմնարար բանաձեւի առաջարկով՝ այս հրապարակը պետք է օգտագործել առաջին հերթին թշնամական հռետորաբանությունը վերացնելու համար,- ասել է Փաշինյանը:

Նրա խոսքով՝ ինքը համաձայն է Թուրքիայում արված այն հայտարարություններին, որ տարածաշրջանի բոլոր երկրները, այդ թվում՝ Թուրքիան, Հայաստանը եւ Ադրբեջանը, միմյանց կարիքն ունեն անվտանգության, ինքնիշխանության եւ անկախության ապահովման համար:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Դեկտեմբերի 12-14-ին, Վրաստանի պաշտպանության նախարարության պաշտպանական ինստիտուտների զարգացման դպրոցի «Պաշտպանության եւ անվտանգության ռազմավարական դասընթացի» ունկնդիրներն ու ղեկավար կազմը գտնվում էր Հայաստանում:

Պատվիրակությունը հյուրընկալվեց Հայաստանի պաշտպանության նախարարության պաշտպանական քաղաքականության եւ միջազգային համագործակցության վարչությունում:

Այցի շրջանակներում՝ պատվիրակությունը եղել է նաեւ պաշտպանության նախարարության պաշտպանական ազգային հետազոտական եւ նախարարության՝ Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարաններում:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԸ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ, ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, դեկտեմբերի 13-14-ին, այցելեց Սամցխե-Ջավախեթիի երկրամասի՝ Ախալցիխեի, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետները:

ԱԽԱԼՑԻԽԵ

Ախալցիխեի մունիցիպալիտետում Աշոտ Սամբատյանը հանդիպում ունեցավ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում պե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՍԱՐ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ Է՝ ԱՆԿԱԽ ՆՐԱՆՑ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ԽՄԲԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը: Ռազմավարության շրջանակներում հաստատվել է երեք գործողությունների ծրագիր: Այս ընթացքում երկրի կառավարությունը կարեւոր օրենսդրական փոփոխություններ իրականացրեց, եւ վրացական օրենսդրությունն ավելի մոտեցավ միջազգայնորեն ճանաչված չափանիշներին:

Վրաստանի կառավարությունը շարունակում է աշխատել իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Այս տարվա սեպտեմբերի 5-ին կառավարությունը հաստատել է մարդու իրավունքների պաշտպանության՝ 2022-2030 թվականների երկրորդ ազգային ռազմավարությունը:

Բացի այդ, այս տարվա հոկտեմբերի 25-ին, Վրաստանի կառավարությունը հաստատել է 2022-2024 թվականների վրացական ազգային գործողությունների ծրագիրը՝ կանանց, խաղաղության եւ անվտանգության վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւերի կատարման համար եւ 2022-2024 թվականների միջոցառումների ծրագիրը՝ կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության եւ զոհերի պաշտպանության վերաբերյալ»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

Վաչապետն ընդգծում է նաեւ, որ Վրաստանի կառավարությունը վերահաստատում է պետության հանձնառությունը մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությանը, որը, իր հերթին, ենթադրում է մարդու իրավունքների պաշտպանության համակարգված, հետեւողական եւ երկարաժամկետ քաղաքականության մշակում եւ կառավարում:

Հիշեցնենք, որ, 1948 թվականի դեկտեմբերի 10-ին, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայում ընդունվեց «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»: Այս ամսաթիվն ընդմիշտ մտավ պատմության մեջ որպես շրջադարձային կետ՝ մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎԻԹԽԱՐԻ ՔԱՅԼԵՐ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ»

Դեկտեմբերի 10-ին, «Մարդու իրավունքների պաշտպանության» միջազգային օրվա կապակցությամբ, Վրաստանի մշակույթի եւ սպորտի նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարեց, որ Վրաստանը, թեպետ վերջին 10 տարում վիթխարի քայլեր է ձեռնարկել՝ երկրում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը բարձրացնելու համար, սակայն մարդու իրավունքների պաշտպանության չափանիշը երբեք բավարար չէ, եւ անհրաժեշտ է ավելի շատ աշխատանք:

- Մենք ունենք կազմակերպված քրեակատարողական ծառայություն, որտեղ պաշտպանված են մարդու իրավունքներն ու արժանապատվությունը, ինչպես նաեւ դատարան, որն ավելի անկախ, որակյալ, պրոֆեսիոնալ եւ անաչառ է, քան 10 տարի առաջ էր, այստեղ շարունակվում է բարեփոխումների եւ բարելավման գործընթացը: Բարելավման գործընթացը շարունակվում է բազմաթիվ ուղղություններով, օրինակ, երբ ներդրվեց ընտրական իրավունքը եւ վերջնականապես հաստատվեց՝ «մեկ ընտրող, մեկ ձայն» սկզբունքը, դա վերաբերեց սեփականությանը, իրավունքին, ընտանեկան կյանքին, անձնական կյանքին եւ այլ: Շնորհավորում եմ բոլորին այս նվաճման եւ առաջընթացի համար՝ լինի դա Վրաստանի ներսում, թե երկրից դուրս, եւ ցանկանում եմ նորանոր հաջողություններ ու առաջընթաց այս ճանապարհին, որը շատ կարեւոր է:

Մարդու իրավունքների պաշտպանության չափանիշը երբեք բավարար չէ. Մենք դեռ ավելի շատ անելիքներ ունենք, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ավելի լավ պաշտպանության ուղղությամբ, որոնց համար արդարադատության նախարարությունում մենք արդեն գերազանց օրենք ենք ընդունել: Ստամբուլի կոնվենցիան վավերացվել է նրանց համար, սակայն գործնականում դեռ շատ մարտահրավերներ կան,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

ՎՐԱՍՏԱՆ - ԱԴՐԲԵՋԱՆ

ԱՅՑԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Դեկտեմբերի 14-15-ին, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Ադրբեջանի վարչապետ Ալի Ասադովը:

Այցի շրջանակներում՝ Ադրբեջանի վարչապետը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլու հետ:

Կայացած հանդիպման առիթով Վրաստանի վարչապետն իր «Թվիթեր» սոցցանցում նշել է, որ Վրաստանի եւ Ադրբեջանի տնտեսական համագործակցության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 9-րդ նիստի ձեւաչափով ադյունավետ հանդիպում է ունեցել Ադրբեջանի վարչապետ Ալի Ասադովի հետ, քննարկվել են տարածաշրջանային կայունության, տնտեսական համագործակցության եւ էներգետիկ անվտանգության հարցեր:

Կառավարության ղեկավարի խոսքով՝ հանդիպմանը քննարկվել են նաեւ երկու երկրների միջեւ առկա ռազմավարական գործընկերության ամրապնդման հեռանկարները:

ԱՄՆ

ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ ԱՃԵԼ Է 30 ՏՈԿՈՍՈՎ

ԱՄՆ բյուջեի դեֆիցիտը նոյեմբերին կազմել է գրեթե 249 մլրդ դոլար, ինչը 30 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը (191,335 մլրդ դոլար):

Բյուջեի եկամուտները, նախորդ տարվա համեմատ, նվազել են 10 տոկոսով կամ 29 մլրդ դոլարով՝ հասնելով մինչեւ 252 մլրդ դոլարի: Միաժամանակ, ծախսերն աճել են գրեթե 6 տոկոսով կամ 28 մլրդ դոլարով եւ կազմել 501 մլրդ դոլար: Մինչդեռ 2022 ֆինանսական տարվա երկու ամսում, որն սկսվել է հոկտեմբերի 1-ին, ԱՄՆ բյուջեի բացասական հաշվեմնացորդը նվազել է գրեթե 6 տոկոսով կամ 20 միլիարդով՝ հասնելով 336 մլրդ դոլարի:

ԱՄՆ պետական բյուջեի բացասական հաշվեմնացորդը 2022 ֆինանսական տարվա արդյունքներով, որն ավարտվել է սեպտեմբերի 30-ին, կրկնակի կրճատվել է եւ կազմել 1,375 տրլն դոլար:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ԱՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ 9-ՐԴ ՓԱԹԵԹԸ

Եվրամիությունը, մշտական ներկայացուցիչների մակարդակով, համաձայնեցրել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների հերթական՝ 9-րդ փաթեթը:

Պատժամիջոցների նոր փաթեթը կտարածվի անօդաչու թռչող սարքերի եւ դրանց մասերի ներմուծման, բանկային հատվածի, Ռուսաստանում հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների վրա: Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 9-րդ փաթեթում, ԵՄ-ի անհատական պատժամիջոցների ցանկում է հայտնվել գրեթե 200 մարդ:

Իր հերթին ԱՄՆ-ը լրացուցիչ պատժամիջոցներ է սահմանել Ռուսաստանի դեմ: Ռուս օլիգարխ Վլադիմիր Պոտանինը եւ նրա գնած «Ռոսբանկը» հայտնվել են ԱՄՆ-ի ֆինանսների նախարարության սեւ ցուցակում: Այդ ցուցակում են հայտնվել նաեւ ՎՏԲ բանկի 17 դուստր ընկերություններ:

Նշենք, որ Պոտանինը, «Forbes»-ի վարկածով, Ռուսաստանի ամենահարուստ մարդկանց ցուցակում երկրորդ տեղում է:

Պատժամիջոցներ կիրառվեն նաեւ Ռուսաստանի կառավարության փոխվարչապետերի ու նահանգապետերի նկատմամբ: Նրանց թվում են Անդրեյ Բելոուսովն ու Դմիտրի Չերնիշենկոն:

ՌՈՒՍ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 296-ՐԴ ՕՐ

ՎՐԱՍՏԱՆԻՑ՝ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի վարչապետի որոշմամբ, ուկրաինացի ժողովրդին մարդասիրական օգնություն տրամադրելու նպատակով, գեներատորներ են ձեռք բերվելու:

Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությանը հանձնարարվել է հնարավորինս սեղմ ժամկետներում կատարել նշված խնդիրը:

Ինչպես նշեց կառավարության վարչակազմի ղեկավար Ռեւազ Ջավելիձեն՝ 26000 մարդ՝ Ուկրաինայի քաղաքացիներ, ովքեր ներկայումս բնակվում են Վրաստանի տարածքում, ստանում են համապատասխան ֆինանսական աջակցություն, ինչպես նաեւ համապատասխան աջակցություն՝ կրթական եւ բժշկական ուղղությամբ: Վրաստանի տարբեր դպրոցներում այսօր սովորում է 2345 երիտասարդ, այդ թվում՝ 1565-ը՝ ուկրաիներեն, ավելի քան 900 հոգու բուժօգնություն է ցուցաբերվել տարբեր բուժհաստատություններում՝ ուղղորդման ծրագրերի շրջանակներում: Դեկտեմբերի 1-ի դրությամբ՝ Ուկրաինայի քաղաքացիներին պետության կողմից տրամադրվող մոտավոր աջակցությունը կազմում է 32 մլն լարի:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ 18 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈՅԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԸ

Եվրամիության խորհուրդը հաստատեց Ուկրաինային 18 միլիարդ եվրոյի օգնության փաթեթը: Ուկրաինան գումարը կստանա 2023 թվականին:

Եվրամիության խորհրդի որոշմամբ, Ուկրաինային օգնություն կտրամադրվի արտոնյալ վարկի տեսքով, որի հիմնական մասը կհոգան Եվրամիության անդամ երկրները: Վարկային երաշխիքը տրամադրվում է կամ Եվրամիության բյուջեով, կամ անդամ երկրների կողմից:

18 միլիարդ օգնություն կօգտագործվի խիստ կարեւոր ենթակառուցվածքների վերականգնման համար:

ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ 64 ԶԻՆԾԱՌԱՅՈՂ

Ինչպես հայտարարեց Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, ռուսական գերությունից ազատվել է 64 ուկրաինացի զինծառայող, այդ թվում՝ 4 սպա եւ 6 շարքային:

Ուկրաինայի նախագահի հավաստմամբ՝ աշխատանքներ են տարվում Ուկրաինայի բոլոր գերիներին ազատ արձակելու ուղղությամբ:

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՊԱՆՎԵԼ Է 447 ԵՐԵԽԱ

Ուկրաինայի զինված ուժերի գլխավոր շտաբի տեղեկությամբ, ռուսական ագրեսիայի արդյունքում, Ուկրաինայում զոհվել է 447 եւ վիրավորվել է 856 երեխա:

Գլխավոր շտաբի տեղեկությամբ, վերոնշյալ տվյալները վերջնական չեն, քանի որ օկուպացված շրջաններից համապատասխան տեղեկություն չի ստացվել:

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է 36-ՐԴ ՎՐԱՑԻ ՄԱՐՏԻԿԸ

Անցյալ շաբաթ Ուկրաինայում զոհվել են Ռուսաստանի դեմ մարտնչող եւս երկու վրացի մարտիկ:

Նշենք, որ, Ուկրաինայում փետրվարի 24-ին պատերազմի սկսվելուց հետո, զոհվել է 36 Վրաստանի քաղաքացի:

Ըստ լրատվական գործակալությունների

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲՅՈՒՋԵ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՐԿԻՐԸ ԿՈՒՆԵՆԱ 29,9 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

52 միլիոն լարիով ավելացվում է Կրթության եւ գիտության նախարարության բյուջեն: Այդ ոլորտում 2023 թվականին նախատեսված է ծախսել 25,031 միլիարդ լարի: Ներքին գործերի նախարարության բյուջեն ավելացվում է 36 միլիարդ լարիով եւ վերջնական կկազմի 1,106 միլիարդ լարի: Բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունը լրացուցիչ կստանա 10 միլիոն լարի, իսկ, ընդհանուր առմամբ, բյուջեն կկազմի 698 միլիոն լարի: Պաշտպանության նախարարությունն իր կարիքների կարգավորման համար, 2023 թվականին կկարողանա ծախսել 1260 միլիարդ լարի: 30 միլիոն լարիով ավելացել է Մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարարության բյուջեն: Այն կհասցվի 431 միլիոն լարիի: Արդարադատության նախարարության բյուջեն կազմել է 392 միլիոն լարի, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 23 միլիոն լարիով: 3 միլիոն լարիով ավելացվում է արտաքին գործերի նախարարության բյուջեն: Այն կկազմի 186 միլիոն լարի: 96 միլիոն լարիով նվազեցվել է էկոնոմիկայի նախարարությանը հատկացվող գումարը, այն հաջորդ տարի կկազմի 558 միլիոն լարի: Ինչ վերաբերում է Ֆինանսների նախարարության բյուջեին, ապա այն կազմում է 106 միլիոն լարի:

ԼԱՇԱ ԽՈՒՅԻՇՎԻԼԻ. «2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ՄԵԿ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ, ԿԳԵՐԱԶԱՆՑԻ 7900 ԴՈԼԱՐԸ»

Վրաստանի խորհրդարանում, 2023 թվականի բյուջեի քննարկման ժամանակ, ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին, անդրադառնալով հաջորդ տարվա մակրոտնտեսական պարամետրերին, նշեց, որ մինչեւ 2023 թվականը տնտեսական աճի եւ համախառն ներքին արտադրանքի դեֆլյատորային ցուցանիշների կանխատեսումները չեն փոխվել եւ դրանցից յուրաքանչյուրը՝ 5 տոկոս է, իսկ անվանական համախառն ներքին արտադրանքը կազմում է 79,7 մլրդ լարի:

- Առաջիկա տարիներին տնտեսական աճի տեմպերը պահպանվում են միջինը՝ 5 տոկոսի սահմաններում, իսկ համախառն ներքին արտադրանքի դեֆլյատորի կանխատեսումը կազմում է 3 տոկոս: Համապատասխանաբար, համախառն ներքին արտադրանքի անվանական դրույքաչափը 2023 թվականին, 79,7 միլիարդ լարիից մինչեւ 2026 թվականը, կաճի մինչեւ 101,2 միլիարդ լարիով: Ինչ վերաբերում է մեկ շնչին ընկնող համախառն ներքին արտադրաքին, ապա, ըստ առկա կանխատեսումների, մինչեւ 2023 թվականը դրա փոխարժեքը կգերազանցի 7900 դոլարը, իսկ մինչեւ 2026 թվականը կգերազանցի 10 000 դոլարը,- ասել է ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին:

ԻՐԱԿԼԻ ԿՈՎԶԱՆԱԶԵ. «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼ ՏՎԵՑ ՆՎԱԶԵՑՆԵԼ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ԵՎ ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ»

Դեկտեմբերի 14-ին, Վրաստանի պետական բյուջեի նախագծի քննարկմանը, օրենսդիր մարմնի ֆինանսաբյուջետային կոմիտեի նախագահ Իրակլի Կովզանաձեն հայտարարեց, որ, երկրի ֆինանսների նախարարության կողմից, տարվա ընթացքում բյուջետային գումարների ծախսման գործընթացում իրականացված մշտական վերահսկողությունը թույլ տվեց նվազեցնել արժեզրկումն ու լարիի կուրսի կայունացումը:

Խորհրդարանում հանդես գալով որպես պետական բյուջեի նախագծի համազեկուցող՝ Իրակլի Կովզանաձեն հատկապես կանգ առավ ներկայացված պետական բյուջեի նախագծի նշանակության վրա երկրի տնտեսական եւ սոցիալական զարգացման ուղղությամբ:

- Ընթացիկ տարվա տնտեսական բարձր ցուցանիշը հիանալի հարթակ է ստեղծում ապագայի համար, որպեսզի է'լ ավելի կատարելագործենք 2023 թվականի բյուջեն, այն ուղղենք առավել նշանակալի առաջնահերթությունների կատարմանը,- հայտարարեց ֆինանսաբյուջետային կոմիտեի նախագահ Իրակլի Կովզանաձեն:

2023-Ի ՀԱՄԱՐ ԹԲԻԼԻՍԻԻ ԲՅՈՒՋԵՆ ԾՐԱԳՐՎԱԾ Է 1,768 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ ԳՈՒՄԱՐՈՎ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն՝ Թբիլիսիի 2023 թվականի բյուջեի նախնական տարբերակն արդեն ուղարկվել է սակրեբուլո, գումարը կազմել է 1,632 միլիարդ լարի:

Միաժամանակ, քաղաքապետն ընդգծեց, որ բյուջեն կհամալրվի ֆինանսների նախարարության տրանսֆերտով եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկով: Ընդհանուր առմամբ, տարբեր ծրագրերի իրականացման համար, կհատկացվի 1,768 մլրդ լարի:

Քաղաքապետը շնորհակալություն հայտնեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն, կենտրոնական կառավարությանը եւ ֆինանսների նախարարությանը՝ աջակցության ու համագործակցության համար:

ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈԽ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարումը կարգավորող ազգային հանձնաժողովի որոշման համաձայն՝ բնական գազի սակագինը սպառողների համար մնացել է անփոփոխ: Այսպիսով, սակագների պահպանումը պայմանավորված է պետության կողմից գազի առկայության եւ սակագնում ներառված բաղադրիչների քաղաքականությամբ, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքի կայունությամբ:

Էներգետիկ շուկայի ընթացիկ բարեփոխման շրջանակներում իրականացված սակագնային փոփոխություններին համապատասխան՝ 3 տարվա կարգավորիչ ժամկետի փոխարեն, սակագները որոշվել են 5 տարի կարգավորող ժամկետով՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2028 թվականի հունվարի 1-ը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ. ՊԱՅԹՈՒՑԻԿ՝ ՆՎԵՐԻ ՏՈՒՓԻ ՄԵՋ

Ախալքալաքի զինվորական ավանի N500 շենքում բնակվող Ի. Մ.-ի տանը պայթյուն է տեղի ունեցել:

«Հարավային Դարպաս» թերթի տեղեկատվությամբ՝ տուժածներ չկան: Հարեւանների ու հարազատների խոսքով՝ նվերի տուփի մեջ պայթուցիկ նյութ է եղել:

Պայթյունից տուժած տան սեփականատիրոջ հարազատներից մեկը նշել է, որ, պայթյունից քիչ առաջ, հարեւանը նրա տան դռան մոտ տեսել է նվերի տուփ, որը հետագայում տարել է ներս:

Ներքին գործերի նախարարությունը դեպքի առիթով հետաքննություն է սկսել Քաղաքացիական օրենսգրքի 229-րդ հոդվածով, որն առնչվում է պայթյունին: Գերատեսչության հաղորդմամբ՝ մեկ մարդ է ձերբակալվել:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(16 դեկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.6691
1 ԵՎՐՈ	2.8346
100 ՌՈՒԲԼԻ	4.1510
1000 ԴՐԱՄ	6.7615

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՐԴՅՈՒՆՔ Է ՏԱԼԻՍ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րում նշանակալից աշխատանք է տարվել՝ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Թեա Ախվլեդիանու հավաստմամբ, կրթության որակի բարձրացման նպատակով, այդ տարածաշրջաններում ընտրվել է 30 դպրոց եւ դրանց բազայի վրա գործարկվել է «Մասնագիտական ունակությունների» զարգացման ծրագիրը, ինչը տեղի երիտասարդների համար լրացուցիչ կրթություն ստանալու հիանալի հնարավորություն է: Բացի այդ, նախադպրոցական եւ հանրային կրթության մատչելիության ավելացման ու ուսումնական միջավայրի բարելավման նպատակով, Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթիի եւ Կախեթիի տարածաշրջաններում, արագ տեմպերով ընթացքի մեջ են հանրային հաստատությունների վերանորոգման-շինարարության նախագծերը:

- Ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա դրական ազդեցություն գործեցին ենթակառույցային բազում նախագծեր, որոնք առնչվում էին մունիցիպալիտետների ներքին ճանապարհների, ոռոգման եւ խմելու ջրի համակարգերի վերանորոգմանը, պուրակների եւ մարզահրապարակների կարգավորմանը եւ այլն: Ազգային փոքրամասնություններով հոծաբնակ վերոնշյալ երեք տարածաշրջանների համապատասխան մունիցիպալիտետներում իրականացվել է մոտ 170 ենթակառույցային նախագիծ, ընդհանուր առմամբ, ծախսվել է 130 միլիոն լարի,- հայտարարեց Թեա Ախվլեդիանին:

Պետնախարարը խոսեց նաեւ այն մասին, որ, պետական քաղաքականության իրականացման հաշվետվության տեսանկյունից, պետնախարարի աշխատակազմի ղեկավարությամբ եւ համակարգմամբ, այս տարի ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի չորրորդ փուլի շրջանակներում, մշակվեց եւ Եվրոպայի խորհրդին ներկայացվեց պետության հաշվետվությունը, որտեղ մանրամասն ներկայացված են վերջին հինգ տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների պաշտպանության ուղղությամբ երկրում առկա իրավիճակն ու հիմնախնդիրների կարգավորման հեռանկարները:

- Քաղաքացիական ինտեգրումը բազմահարթակ գործընթաց է, ինչը պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամի, ինչպես փոքրամասնության, այնպես էլ՝ մեծամասնության լիարժեք մասնակցությունը, աջակցությունն ու գործուն ներգրավումը, բնականաբար, նաեւ՝ պատասխանատվության ստանձնումը: Հենց դրանում ենք մենք տեսնում ռազմավարության իրականացման արդյունավետությունն ու այդ ուղղությամբ հանրության միասնության մեծ հույսն ունենք,- ընդգծեց հաշտեցման եւ իրավահավասարության հարցերով պետնախարարը:

ՀՈԳԵՎՈՐ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Ի՞ՆՉ ԵՍ ԹՈՂՆՈՒՄ ՀԻՆ ՏԱՐՈՒՄ ԵՎ ԻՆՉՈ՞Վ ԵՍ ՄՏՆՈՒՄ ՆՈՐ ՏԱՐԻ...»

Անցած կիրակի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը իր քարոզում, ի մասնավորի, հետեւյալն ասաց.

- Սիրելի հավատացյալ քույրեր ու եղբայրներ, այսօրվա Ավետարանում Քրիստոսը ասում է. «Երբ ճաշ պատրաստես, սեղան գցես, մի' հրավիրիր միայն քո հարուստ հարեւաններին, բարեկամներին, որպեսզի հետո էլ նրանք քեզ հրավիրեն, այլ հրավիրիր նրանց, ովքեր իրապես այդ ճաշի կարիքն ունեն:

Շուտով գալիս է Նոր տարին: Արդեն շատերդ սկսել եք պատրաստվել այդ օրվան: Սակայն շատ անգամ մոռանում եք, որ Նոր տարին ոչ միայն այդ ճաշատեսակների, խմիչքի համար նախատեսված օր է կամ օրեր են, այլ Նոր տարին գալիս է մարդուն ասելու, թե ի՞նչ նոր բանով ես դու մտնում նոր տարի եւ ի՞նչ թողեցիր հին տարում:

Նոր տարուց հետո գալիս է Սուրբ Ծնունդը: Դա պատահականորեն չի դրված այդպես: Սուրբ Ծնունդը սկիզբն է մեր հավատքի, եւ ամեն տարի Սուրբ Ծնունդը տոնելով՝ մեր հավատքի վերազարթոնքն ենք տոնում, նորն ենք տոնում, ոչ թե հինը՝ ինչ եղել է:

Ամեն Սուրբ Ծնունդով պետք է մեր մեջ մի նոր լավ, կրոնական իմաստով նոր բան ծնվի: Եվ Նոր տարին էլ նշվում է Սուրբ Ծննդից մի քանի օր առաջ, որպեսզի մենք սկսենք մտածել, թե ի՞նչ թողեցինք հնում եւ ի՞նչ ենք բերում, ի՞նչ ենք տանում դեպի նորը, ի՞նչ ենք անելու նորում:

Նոր տարին, մեզ համար, նաեւ հոգեւոր նոր ձեռքբերման ժամանակ է: Նրա համար է, որպեսզի մենք կարողանանք վատը թողնել հնում եւ լավով գնալ դեպի նորը:

Շատ-շատերս այսօր ինչ-որ մեկից նեղված ենք, ինչ-որ մեկի հետ չենք խոսում, ինչ-որ մեկին չենք բարեւում: Այդ ամենը պետք է թողնենք հնում: Մենք քրիստոնյաներ ենք, ու բոլորս պետք է մեկս-մյուսին ներենք:

Եվ այդ ճաշը, այդ ընթրիքը, այն ամենը, ինչ-որ դուք պատրաստում եք Նոր տարվա համար, այդ սեղանները, որ դուք գցում եք՝ գեղեցիկ-գեղեցիկ, պետք է լինեն նրա համար, որպեսզի հրավիրեք այն մարդուն, ով ձեզանից նեղված է եւ ում հետ անհաշտ եք, եւ այդ սեղանի շուրջ նրա հետ հաշտվեք, նրա հետ ընդհանուր լեզու գտնեք: Դա է խորհուրդը:

Եվ երկրորդ՝ մտածենք մեր կյանքի մասին. ինչպե՞ս ենք ապրում, արդյոք ճի՞շտ ենք ապրում եւ ի՞նչ է պետք փոխել մեր կյանքում: Թողնենք հինը եւ սկսենք նորը: Եվ մենք մեր կյանքը պետք է ապրենք այնպես, որպեսզի մեզանից հետո ինչ-որ օգուտ թողած լինենք:

Սիրելիներս, փորձենք մտածել՝ ի՞նչն է, որ պետք է թողնենք հնի՝ 2022-ի մեջ եւ ի՞նչ նոր բանով կամ ի՞նչ նոր երազանքներով պետք է մտնենք 2023 թվականը:

Թող Աստված օրհնի բոլորիդ, ուժ, կարողություն եւ առողջություն տա:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑՆԵՆ ՄԻԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մակարգին: Կստեղծվի արդյունավետ համակարգ, ծրագիրը կլինի 6, 8 եւ 11 ամիս: Դա լինելու է ինտենսիվ զորավարժություն: Այս ծրագիրն ավարտելուց հետո՝ անձը կանցնի պարտադիր զինվորական ծառայություն եւ նրան կշնորհվի շարքայինի կոչում: Հիմնական նպատակը լինելու է հզոր ռեզերվի ստեղծումը,- ասաց վարչապետը:

- Համալրումը, մարզային նախարարության փոխարեն, կիրականացնի պաշտպանության նախարարությունը: Այս գործընթացը կսկսվի հունվարից, սակայն ծրագիրը կիրականացվի 2025 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ, համակարգը պատրաստ կլինի: Մենք ցանկանում ենք պաշտպանական կենտրոններ կառուցել մարզերում, որպեսզի երիտասարդների համար ավելի հեշտ լինի տեղեկատվություն ստանալը: Այս նախագիծը մեզ կարժենա ավելի քան 80 մլն լարի,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետը, անդրադառնալով պաշտպանության նոր օրենսգրքի դրույթներին, հայտարարեց, որ դրանում ներառվելու են զինծառայողների սոցիալական երաշխիքները:

- Օրենսգրքում գրված կլինի, որ բնակարանների կառուցումը լինելու է պետության պարտավորությունը:

Բազմաթիվ այլ արտոնություններ են նախատեսված զինվորականների համար: Օրինակ՝ Աստված օրհնի բոլորին, իսկ վիրավորվելու ու խեղվելու դեպքում փոխհատուցումը, օգնությունը, եթե մինչ այդ եղել է 7000 լարի, կլինի 20 000 լարի: Պարտականությունները կատարելիս մահանալու դեպքում կտրվի միանվագ օգնություն՝ 30 000 լարիի չափով: Տարածքային ամբողջականության, ազատության եւ անկախության համար մահվան դեպքում՝ փոխհատուցումը սահմանվում է 100 000 լարի: Սա վարչապետության օրոք Բիձինա Իվանիշվիլու որոշումն էր, որը տարածվեց նրանց մեջ գտնվող ոստիկանների վրա: Սա է մեր վերաբերմունքը մեր իրավապահ մարմինների, մեր հերոսների, մեր հպարտ զինվորականների ու ոստիկանների նկատմամբ,- ընդգծեց վարչապետը:

Վարչապետը բարձրաձայնեց նաեւ մեկ այլ նախաձեռնություն, ըստ որի՝ ուսանողները կկարողանան պարտադիր զինվորական ծառայություն անցնել ուսման ընթացքում:

- Մինչեւ 23 տարեկան ուսանողները, ովքեր կորոշեն զինվորական ծառայություն անցնել, հնարավորություն կունենան, չորս տարի շարունակ, տարին մեկ ամիս վերապատրաստում անցնել մարտական հենակետերում: Չորս տարի անց այս վերապատրաստման հիման վրա նա կանցնի պարտադիր զինվորական ծառայության,- ասաց վարչապետը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԸ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ, ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու, Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետ Իրակլի Լազարիշվիլու, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանի, սակրեբուլոյի նախագահ Դավիթ Լոմիձեի եւ փոխնախագահ Համբարձում Բաբոյանի հետ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ապակենտրոնացված համագործակցության հնարավորություններին, խոսեցին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում իրականացված ընթացիկ ենթակառույցային նախագծերի մասին, ընդգծեցին այս տարի վերանորոգված, ժամանակակից սարքավորումներով հագեցված Սամեբա գյուղում գործող մաքսակետի նշանակության մասին:

Հանդիպմանը կողմերն անդադարձան նաեւ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում կրթության ոլորտում իրականացված ընթացիկ ծրագրերին, ընդգծվեց «1+4» հանրակրթական ծրագրի նշանակությունը, ինչը երկրամասի ազգությամբ հայ երիտասարդներին պետական լեզվի լիարժեք տիրապետման եւ երկրի հասարակական կյանքում ընդգրկման ու ինտեգրման հնարավորություն է ընձեռում:

Ապա՝ Հայաստանի դեսպանը, Ախալցիխեի քաղաքապետի ուղեկցությամբ, Ախալցիխեի տիկնիկային թատրոնի սրահում հանդիպում ունեցավ ախալցխահայերի ներկայացուցիչների հետ, այցելեց Ախալցիխեի «Արմաթ» կենտրոն, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի եւ եկեղեցուն կից գործող «Վարդգես Սուրենյանց» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոն:

Շրջայցի ավարտին՝ Հայաստանի դեսպանը Ծուղրութ գյուղում հյուրընկալվեց Սապոնջյանների տանը, որտեղ Ախալցիխեի հոգեւոր հովիվ Հայր Հակոբը ներկայացրեց այդ տանը պահվող 10-րդ դարի հայտնի Ավետարանը:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Ախալքալաքիում Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը նախ՝ այցելեց Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցի, ինչպես նաեւ Ախալքալաքիի թիվ 4 հանրային դպրոց, որտեղ հանդիպում ունեցավ դպրոցի ուսուցիչների եւ աշակերտների հետ: Ապա՝ Ախալքալաքիի քաղաքապետարանում կայացավ Հայաստանի դեսպանի հանդիպումը Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանի եւ սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի, քաղաքապետարանի աշխատակիցների հետ:

Ախալքալաքիում Հայաստանի դեսպանը հյուրընկալվեց ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Նշան վարդապետ Հմայակյանի կողմից, որից հետո, վերջինիս ուղեկցությամբ, այցելեց Ախալքալաքիի եւ Կումուրդոյի միտրոպոլիտ Նիկոլոզ Փաչուաշվիլու նստավայր:

Աշոտ Սմբատյանը Կարծախ գյուղում այցելեց Ջիվանու տուն-թանգարան, Ախալքալաքիի «Ապագայի տուն» կենտրոնում ներկա գտնվեց «Ֆրունզիկ Մկրտչյան. Հնդկաստանը հիշում է ինձ» ֆիլմի ցուցադրությանը, ապա՝ այցելեց Ախալքալաքիի երիտասարդական կրթամշակութային կենտրոն, ծանոթացավ կենտրոնում գործող Թումոյի խմբակի գործունեությանը, հանդիպում ունեցավ տեղի բնակիչների հետ:

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Քաղաք Նինոծմինդայում Վրաստանում Հայաստանի դեսպանը հանդիպում ունեցավ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանի եւ քաղաքապետարանի ղեկավար կազմի, ապա՝ տեղի բնակիչների հետ:

Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եկեղեցում Հայաստանի դեսպանին դիմավորեց Նինոծմինդայի հոգեւոր հովիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանը եւ ուղեկցեց՝ եկեղեցուն կից գործող «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային երիտասարդական կենտրոն:

Վրաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատյանը եղավ նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղում գտնվող Վահան Տերյանի տուն-թանգարանում, ծանոթացավ թանգարանի ցուցադրությանը: